ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՐԴԱՎԱՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

Սյունիքի մարզ, գ. Վարդավանք,
հեռ. 098-45-57-08
էլ.հասցե vardavanq@schools.am
N4 10.02.2025թ.

ՀՀ Սյունիքի մարզպետ

պարոն Ռ.Ղուկասյանին

Հարգելի՛ մարզպետ

Տեղեկացնում եմ, որ <<Վարդավանքի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում առաջացել է կերպարվեստի (4 դասաժամ), Ֆիզկուլտուրայի (18 դասաժամ), աշխարհագրության (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղեր: Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի փետրվարի 28-ին, ժամը 14:00-ին <<Վարդավանքի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում:

Կից ներկայացվում է մրցույթի հայտարարության տեքստը:

Առդիր մեկ թերթ:

Վարդավանքի միջնակարգ դպրոցի տնօրեն՝ /Լ.Ասրյան/

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի <<Վարդավանքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ի կերպարվեստի (4 դասաժամ), Ֆիզկուլտուրայի (18 դասաժամ), աշխարհագրության (5 դասաժամ) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ:
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերը ընդունվում են 2025թ. փետրվարի 11-ից մինչև փետրվարի 24-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի փետրվարի 28–ին ժամը 14:00-ին ՀՀ Սյունիքի մարզի Վարդավանքի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գյ.Վարդավանք, թաղամաս 1, շենք 15: Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 45-57-08 հեռախոսահամարով: